ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

15 մարտի 2011թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերին համապատասխան.

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետի, քաղաքապետի տեղակալների, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N4-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի ապրիլի 1-ից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N4-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծով առաջարկվում է 2011 թվականի ապրիլի 1-ից Երևանի քաղաքապետի, քաղաքապետի տեղակալների, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների, Երևանի ավագանու խմբակցությունների գործավարների և փորձագետների ու քաղաքապետարանի աշխատակազմի, այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը (բացառությամբ պատվիրակված լիազորություններ իրականացնող առանձնացված ստորաբաժանումների ՍԾՏԲ-ի և ՔԿԱԳ-ի աշխատակիցների) բարձրացնել 50000-ական դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N4-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ կատարել Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևան քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N169-Ն որոշումներում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N4-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2011 թվականի բյուջեով նախատեսված ծախսերում փոփոխության անհրաժեշտություն է առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի ------ «---» -ի
N------- -Ա որոշման

«Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2009 թվականի հուլիսի 6 -ի
N4 -Ա որոշման»

Երևանի քաղաքապետի, քաղաքապետի տեղակալների, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների, Երևանի ավագանու խմբակցությունների գործավարների և փորձագետների ու քաղաքապետարանի աշխատակազմի, այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, հասարակական կարգի պահպանության ծառայության աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը

հազ.դրամ

հ/հ	**Հաստիքների անվանումը**	**Միավորի պաշտոնային դրույքաչափը**
1	Քաղաքապետ	450,0
2	Քաղաքապետի առաջին տեղակալ	380,0
3	Քաղաքապետի տեղակալ	350,0
4	Վարչական շրջանի ղեկավար	315,0
5	Աշխատակազմի քարտուղար	270,0-300,0
6	Քաղաքապետի գլխավոր խորհրդական	290,0
7	Քաղաքապետի խորհրդական, քաղաքապետի խորհրդական-գլխավոր դիզայներ	280,0
8	Աշխատակազմի քարտուղարի տեղակալ, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ, վարչական շրջանի ղեկավարի տեղակալ, վարչության պետ, վարչության պետ-գլխավոր ֆինանսիստ, քարտուղարության պետ, ծառայության պետ	270,0
9	Վարչության պետի տեղակալ, վարչության պետի տեղակալ-գլխավոր նկարիչ, ծառայության պետի տեղակալ	250,0
10	Քաղաքապետի օգնական, մամուլի քարտուղար	230,0
11	Բաժնի պետ, բաժնի պետ - գլխավոր հաշվապահ	225,0-250,0
12	Տնտեսվար	225,0
13	Գործավար	120,0-200,0
14	Բաժնի պետի տեղակալ	190,0
15	Մատակարար	170,0
16	Գլխավոր մասնագետ, գլխավոր մասնագետ-դենդրոլոգ, գլխավոր մասնագետ-էկոլոգ	170,0-190,0
17	Խմբակցության փորձագետ	165,0
18	Առաջատար մասնագետ	165,0-170,0
19	Առաջին կարգի մասնագետ	155,0-165,0
20	Տեխնիկական աշխատող	150,0
21	Համակարգչային տեխնիկայի օպերատոր-գործավար	120,0-150,0
22	Վարորդ	140,0-150,0
23	Պարետ	140,0
24	Երկրորդ կարգի մասնագետ, համակարգչային տեխնիկայի սպասարկող	120,0
25	Պահակ, բանվոր, հավաքարար	100,0

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ